* * *

Աշունը կուլայ պատուհանիս տակ,
Ձիթենիները կը դողան ցուրտէն,
Խինդի դուռները ամէն կողմէ փակ,
Անձրեւ ու մըշուշ, երկինք՝ թախծադէմ:

Սիրտ իմ, մի սըգար, ա՜խ սիրտ իմ, տոկա՛,
Վաղը Գարունը նորէն պիտի գայ,
Լեռները նորէն մեզ պիտի կանչեն,
Դաշտերը նորէն պիտի կանաչեն,
Պիտի մանկանաս, սիրտ իմ, դուն նորէն,
ըզքեզ ծոցս առած մեղմիկ օրօրեմ:

Պաշտանքի թեւով լեռները ճախրենք:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

## ՔԱՌԵԱԿ

Ի՞նչ տեսար բացի սուտ ու սըխալ,
Ա՛լ ինչո՞ւ յամենալ ու մըխալ,
Բոցի մ՛ պէս բըռընկիր ու անցիր,
Տեսնողը գէթ փայլիդ նախանձի:

Մ. Մ.

digitised by A.R.A.R.@